ԽՈՇՈՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ (1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ՍԱՄՎԵԼ ԳԵՂԱՄՅԱՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմն առանձնապես նպաստավոր պայմաններ էր ստեղծել Թուրքիայում առևտրական կապիտալի զարգացման համար։ Այդ ամբողջ ժամանակաշրջանում Թուրքիան առևտրական ակտիվ կապերի մեջ էր արտաքին աշխարհի հետ։ Օրինակ, Գերմանիային վաճառելով հիմնականում ստրատեգիական նշանակություն ունեցող ապրանքներ, Թուրքիան միաժամանակ շարունակում էր առևտրական սերտ կապեր պահպանել ԱՄՆ-ի և Անգլիայի հետ։ Վերջիններս, ձգտելով թուլացնել Թուրք-գերմանական տնտեսական կապերը, Թուրքական ապրանքների համար վճարում էին բարձր գներ։ Պատերազմի հետևանքով Թուրքական հոմքի նկատմամբ աճող շահագրգռվածությունը հանգեցրեց այն բանին, որ Թուրքիան արտաքին առևտրում ունեցավ ակտիվ սալդո և կուտակեց ոսկու ու վալյուտայի զգալի պաշարներ։

Թուրքական օրենսդրությունը նպաստում էր առևտրական կապիտալի զարգացմանը։ Այդպիսի օրենքներից էր նաև 1944 թ. մարտին ընդունված «Առևտրի կարգավորման ու սպեկուլյացիայի դեմ պայքարի մասին» օրենքը։ Այս օրենքով կառավարությունը հաստատում էր ապրանքների առավելագույն գները, որոշում էր արդյունաբերողների, մեծածախ ու մանրածախ առևտրով զբաղվող առևտրականների շահույթի չափը, ստեղծում էր հսկիչների լայն ցանց, որոնք հետևելու էին օրենքի կատարմանը։ Հիշյալ օրենքը ճանաչում էր արդյունաբերողների և առևտրականների իրավունքը՝ ստանալ 10—20%-ի չափով շահույթ. այսինքն, արդյունաբերողն իրավունք ուներ իր ապրանքը մեծածախ առևտրականներին վաճառել ինքնարժեքից 10—20% ավել գնով։ Վերջիններս էլ ապրանքը վաճառում էին իրենց գնած արժեքից 10—20%-ով թանկ, իսկ մանրածախ առևտրականն էլ իր հերթին էր ավելացնում ապրանքի գինը։ Այսպիսով, մինչև ապրանքը հասնում էր գնորդին, նրա գինն օրենքի հիման վրա բարձրանում էր ոչ պակաս, քան 50%-ով[1]։

Ինչպես վկայում են Ստամբուլի առևտրաարդյունաբերական պալատի տվյալները, առևտրականներն այդ տարիներին ստանում էին 300—500 և անգամ մինչև 1000%-ի հասնող շահույթ[2]։

Թուրք հայտնի պատմաբան Հ. Բայուրը 1945 թ. հանդես գալով մեջլիսում, նշել է, որ Թուրքիայում կան ավելի քան 30—40 հազար հարուստներ,

---

[1] Ю. Н. Розалиев, Особенности развития капитализма в Турции, М., 1962, с. 181.

[2] П. П. Моисеев, Финансы Турции и положение трудящихся в годы II-й мировой войны («Ученые записки Института востоковедения АН СССР», вып. XVIII, 1959, с. 198).

որոնք իրենց հարստությունը դիզել են պատերազմի տարիներին։ Ինչպես նշում էր Հ. Բայուրը, նրանցից ոմանք թեև միլիոնատերեր չէին, բայց կուտակել էին ոչ պակաս 100 հազար լիրա[3]։

Առևտրական կապիտալի կուտակման վկայություն կարելի է համարել մասնավոր անձանց ներդրումների աճը։ Թուրք մի հեղինակի տվյալներով, մասնավոր ներդրումները 1938 թ. համեմատ 1948 թ. աճեցին մոտ չորս անգամ, այսինքն՝ 227 մլն լիրայից հասան 813 մլն-ի[4]։ Այստեղ հաշվված չեն այն ներդրումները, որոնք թուրքական բուրժուազիան կատարել էր արտասահմանյան բանկերում։ Բանկային գործարքների աճի մեկ այլ վկայություն կարելի է համարել հենց բանկերի ու դրանց բաժանմունքների թվի ավելացումը։ Եթե դրանց թիվը 1927 թ. հավասար էր 19-ի, ապա 1948 թ.՝ 32-ի[5]։

Հիշյալ ժամանակաշրջանում Թուրքիայում զգալիորեն մեծացավ բաժնետիրական ընկերությունների դերը։ Նշված երևույթը խոսում էր այն մասին, որ կապիտալիստական հարաբերությունները Թուրքիայում հասել էին խոշոր կապիտալիստական արտադրության մակարդակի։ Եթե 1943 թ. Թուրքիայում կար ընդամենը 421 բաժնետիրական ընկերություն՝ 244,9 մլն լիրա կապիտալով, ապա 1950 թ. երկրում արդեն գործում էր 782 բաժնետիրական ընկերություն՝ 874,7 մլն լիրա կապիտալով[6]։

Թուրքիայում խոշոր առևտրական բուրժուազիայի ազդեցության մասին է խոսում նաև առևտրական պալատների գործունեությունը, որոնց շուրջը կենտրոնացել էին համապատասխան շրջանների առևտրականները։ Այս պալատների խնդիրն էր օժանդակել առևտրի զարգացմանը, հավաքել և մշակել առևտրական ինֆորմացիան, պատրաստել վիճակագրական նյութեր, հետևել հիմնական ապրանքների շուկայական գներին, առևտրաարդյունաբերական հարցերով, առաջարկություններով, հայտարարություններով հանդես գալ մինիստրությունների և տեղական իշխանությունների առջև, լուծել առևտրական կոնֆլիկտները, իրենց շրջաններում բացել տոնավաճառներ և այլն։ Առևտրական պալատները ղեկավարում էին խոշոր առևտրականները։ Օրինակ, Ստամբուլի, Իզմիրի, Անկարայի առևտրական պալատների ղեկավարությունը գտնվում էր Թուրքիայի այնպիսի հայտնի գործարար մարդկանց ձեռքին, ինչպիսիք էին Քարամանլին, Ֆիլիբելլին, Վ. Քոչը և ուրիշները։

Ինչպես հայտնի է, առևտրական պալատները Թուրքիայում գոյություն ունեին դեռ մինչև հանրապետական կարգը, որպես կամավորական ընկերություններ։ Սակայն 1925 թ. թուրքական իշխանությունները փոխել էին առևտրական պալատների գործունեության սկզբունքը և բոլոր առևտրականներին, որոնք ունեին ավելի քան 5 հազար լիրա, պարտավորեցրել էին դառնալ նոր ստեղծվող առևտրական պալատների անդամներ, որոնց գործունեությունը հսկում էր առևտրի մինիստրությունը։ Բնականաբար, առևտրականները չէին հաշտվել իրենց իրավունքների սահմանափակման հետ և հանդես էին գալիս առևտրական գործերում պետության միջամտության դեմ ու պետական հսկո-

---

[3] Kemal Karpat, Türk demokrasi tarihi, sosyal, ekonomik, kültürel temeller, İstanbul, 1967, s. 85.

[4] Նույն տեղում։

[5] „Ulus", 14. III. 1950.

[6] Ю. Н. Розалиев, նշվ. աշխ., էջ 192։

դությունից ազատ առևտրական պալատների ստեղծման օգտին։ Առևտրականները և ձեռնարկատերերն առևտրական պալատների իրենց ներկայացուցիչների միջոցով բողոք էին հայտնում իրենց գործերին կառավարության միջամտության դեմ։ Այսպես, օրինակ, Իզմիրի առևտրական պալատը 1945 թ. հանդես գալով առևտրական գործերին կառավարության միջամտության դեմ, պահանջում էր առևտրին տալ անսահմանափակ ազատություն[7]։ Միլիոնատեր Վ. Քոչը, որը 1928—1951 թթ. ղեկավարում էր Անկարայի առևտրական պալատը, դրել է, որ Անկարայի, Ստամբուլի և Իզմիրի առևտրական պալատները պարբերաբար կազմակերպում էին խորհրդակցություններ և իրենց պահանջները հասցնում կառավարությանը[8]։ Սա նույնպես թուրքական առևտրական բուրժուազիայի դիրքերի ուժեղացման ապացույց է։

Առևտրական կապիտալի աճի մասին պատկերացում կարող է տալ նաև որոշ խոշոր ձեռնարկատերերի և ֆիրմաների գործունեությունը։ Այսպես, օրինակ, խոշոր առևտրական և արդյունաբերող Ս. Օմերն իր գործունեության սկզբում զբաղվում էր բամբակի առևտրով և 1938-ից անցել էր բամբակի վերամշակման ու տեքստիլ արտադրության ոլորտը։ Նա հիմնել է մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ ու բաժնետիրական ընկերություններ։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (1947) Ս. Օմերը հիմնեց «Աքբանկը»[9]։

Մյուս խոշոր ձեռնարկատերը՝ Ն. Էջզաշբաշին, կրթություն ստանալով Գերմանիայում և ԱՄՆ-ում, 1930-ական թվականների վերջերին վերադառնում է Թուրքիա՝ բժշկագիտության դիպլոմով[10]։ Նա հիմնում է դեղանյութերի պատրաստման մի քանի լաբորատորիաներ։ Ինչպես հայտնի է, դեղանյութերը պատերազմի պայմաններում իրացվում էին շատ բարձր գներով, որը և նրան հնարավորություն է տալիս 1941—1943 թթ. ընդարձակել իր ձեռնարկատիրական գործունեությունը, կառուցել կերամիկայի գործարան և մի շարք դեղագործական ձեռնարկություններ։ Արդեն 1950 թ. Ն. Էջզաշբաշին դարձավ երկրի ամենախոշոր հարուստներից մեկը։

Խոշոր միլիոնատեր Վ. Քոչն իր կարիերան սկսել է հոր առևտրական կրպակից, այնուհետև զբաղվել է ռեզինի, կաշվի, կոշիկի վաճառքով, դրամական ներդրումներ է կատարել կապիտալային գործերի մեջ, իսկ 1938 թ. կազմակերպել է առևտրական-բաժնետիրական ընկերություն՝ 30 հազ. լիրա կապիտալով[11]։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Վ. Քոչը զբաղվում է բեռնատար մեքենաների առևտրով, իսկ պատերազմից հետո սկսում է սերտորեն համագործակցել ամերիկյան ֆիրմաների հետ, և, վերջապես, կապիտալ ներդրումներ է կատարում նաև արդյունաբերության մեջ։

Մյուս խոշոր ձեռնարկատերը՝ Յու. Ավունդուքը, ծնվել է առևտրականի ընտանիքում[12]։ Դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նա Ստամբուլում հիմնում է առևտրական ֆիրմա, կապեր է հաստատում անգլիա-

---

[7] „Akşam", 22. III. 1945.

[8] Vehbi Koç, Hayat Hikayem, İstanbul, 1974, s. 108.

[9] Osman Nebioğlu, Türkiyede kim kimdir, İstanbul, 1961—62, s. 526.

[10] Ю. Н. Розалиев, նշվ. աշխ., էջ 213։

[11] Vehbi Koç, նշվ. աշխ., էջ 63։

[12] Ю. Н. Розалиев, նշվ. աշխ., էջ 227։

կան, իտալական ֆիրմաների հետ, ընտրվում է Ստամբուլի առևտրական պալատի նախագահ։ 1930 թ. նրա ֆիրման տեղափոխվում է Անկարա, որտեղ նա սկսում է գործարար լայն կապեր հաստատել օտարերկրյա շատ ֆիրմաների հետ։

Թուրքիայում ամենահին առևտրական ֆիրմաներից է Բուրլա ընտանիքին պատկանող ֆիրման[13]։ Բուրլաները ծագումով հրեա են, որոնք ընդունել են մահմեդականություն։ Դժվար է դատողություններ անել Թուրքիայում Բուրլա ընտանիքի առևտրաարդյունաբերական գործունեության չափերի, նրա կապերի և ազդեցության մասին, քանի որ, հաշվի առնելով Թուրքիայի ազգային բուրժուազիայի որոշ մասի հակակրանքն այլազգի բուրժուազիայի նկատմամբ, Բուրլա ընտանիքը ոչ մի կերպ չի մասսայականացնում իր գործունեությունը։ Այդ պատճառով թուրքական գրականության ու մամուլի մեջ շատ քիչ տեղեկություններ կան Բուրլա ընտանիքի վերաբերյալ։ Սակայն այն փաստը, որ Բուրլաների ֆիրման գտնվում էր այն ֆիրմաների մեջ, որոնք ըստ ունևորության հարկի հարկադրված էին միլիոն լիրայով, վկայում է այս ֆիրմայի խոշորության մասին։ Չնայած այն մեծ վնասին, որ նրան հասցրեց ունևորության հարկը, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո էլ Բուրլաների ֆիրման համարվում է երկրում խոշորագույններից մեկը, զբաղվում է զանազան ապրանքների ներմուծմամբ և կապիտալ ներդրումներ է կատարում արդյունաբերության մեջ։

1948 թ. ստեղծվում է «Տրանսթյուրք» ֆիրման, որը զբաղվում է մեքենաների և սարքավորումների ներմուծմամբ ու ծխախոտի, շոր մրգերի արտահանմամբ։ Ֆիրմայի հիմնադիրներն էին Թ. Փիյալեն, Սուրենը և Բարաղը[14]։

Խոշոր առևտրական կապիտալի զարգացումը հատկապես արագացավ 1950-ական թվականների սկզբներին։ Ինչպես վկայում են թուրքական տվյալները, 1950—1953 թթ. ընթացքում Թուրքիայում ստեղծվում են 101 առևտրական կազմակերպություններ՝ 136 մլն լիրա կապիտալով։ Զգալիորեն ավելանում է նաև բաժնետիրական ընկերությունների թիվը, այդ տարիներին հիմնվում են 152 ընկերություններ՝ 365 մլն լիրա կապիտալով[15]։

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հատկապես հետպատերազմյան շրջանում Թուրքիայում տեղի էր ունենում խոշոր կապիտալի կենտրոնացման պրոցես։ Այս պրոցեսին զուգընթաց կատարվում էր նաև թուրքական խոշոր բուրժուազիայի, հատկապես առևտրական բուրժուազիայի դիրքերի ամրապնդում, որին արդեն չէր բավարարում պետության վարած պետական կապիտալիզմի քաղաքականությունը։ Ինչպես հայտնի է, դեռ 1930-ական թվականներին պետական սեկտորը Թուրքիայում զգալի տնտեսական ուժ ուներ, ինչ չէր կարելի ասել մասնավոր սեկտորի մասին, որի դիրքերը դեռ բավականաչափ թույլ էին։ 1930—1940-ական թվականներին երկրի զարգացումը ցույց տվեց, որ Թուրքիան շնորհիվ պետական կապիտալիզմի քաղաքականության և օտարերկրյա կապիտալի ներդրումների սահմանափակման կարողացավ հասնել որոշակի տնտեսական առաջընթա-

---

[13] Н. Г. Киреев, Национальный и иностранный капитал во внешней торговле Турции, М., 1968, с. 93.

[14] Նույն տեղում։

[15] „Kalkınan Türkiye", Ankara, 1954, s. 123.

ցի, կառուցել երկրի մասշտաբով խոշոր ձեռնարկություններ, որոնք վեր էին մասնավոր սեկտորի ուժերից։ Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զգալիորեն ամրապնդելով իր դիրքերը, մասնավոր սեկտորն այլևս չէր ցանկանում գտնվել պետության հսկողության տակ և պահանջում էր սահմանազատել պետական ու մասնավոր սեկտորների սահմանները։ Երկրի գործարար շրջանները գտնում էին, որ պետական կապիտալիզմն ապահովել է երկրի տնտեսական անկախությունը, հիմնել ազգային էկոնոմիկա և դրանով էլ ավարտել է իր պատմական դերն ու արդեն կաշկանդում է Թուրքիայի տնտեսության զարգացումը։

1948 թ. նոյեմբերի 22—27-ը Ստամբուլում տեղի ունեցավ տնտեսական կոնգրես, որը ցույց տվեց, թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել Թուրքական ազգային բուրժուազիայի հայացքներում՝ պետական կապիտալիզմի նկատմամբ։ Կոնգրեսում ստեղծվել էին 3 հանձնաժողովներ, որոնք զբաղվելու էին պետական կապիտալիզմի, արտաքին առևտրի և հարկային բարեփոխումների խնդիրներով[16]։ Պետական կապիտալիզմի հանձնաժողովը պահանջում էր, որպեսզի պետությունը գործի միայն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, տրանսպորտը, ռազմական արդյունաբերությունը, փոստը և այլն։ Ձեռնարկատերերը պահանջում էին, որպեսզի պետությունը չմրցակցեր իրենց հետ, որ իրենք ազատ գործունեության իրավունք ստանային և օգտվեին պետական ձեռնարկություններին տրվող արտոնություններից։ Կային պահանջներ նաև այն մասին, որ պետությունը պետք է գործի միայն այնպիսի ոլորտներում, որտեղ շահ չի ապահովվում մասնավոր ձեռնարկատիրության համար և կամ երբ մասնավոր ձեռնարկատիրությունը չունի պահանջվող կապիտալը։

Արտաքին առևտրի հանձնաժողովն առաջարկում էր միջոցներ ձեռնարկել արտահանումը խրախուսելու և ներմուծումը սահմանափակելու ուղղությամբ։ Հարկային բարեփոխման հանձնաժողովն էլ խորհուրդ էր տալիս վերացնել գյուղատնտեսական մթերքների վրա դրած հարկադրումները։ Կոնգրեսի պատգամավորներից Ա. Քույուջաքը գտնում էր, որ «պետությունը տնտեսական գործերի ղեկավարման ժամանակ պետք է խաղա լուսավորչական դեր և անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպչական»[17]։

Տնտեսական կոնգրեսի աշխատանքները պարզորոշ ցույց տվեցին, որ երկրի ազգային բուրժուազիայի տարբեր խմբավորումները հանդես էին գալիս պետական կապիտալիզմի որոշակի սահմանափակման օգտին, սակայն ոչ մի դեպքում կողմնակից չէին նրա վերացմանը։ Պետական կապիտալիզմի ապագայի շուրջն ընթացող գաղափարական պայքարն արտահայտվեց նաև երկրի քաղաքական գործիչների ելույթներում ու գործունեության մեջ։ Այդպիսի գործիչներից էր նաև Ջ. Բայարը, որը 1932—1937 թթ. զբաղեցնում էր Թուրքիայի էկոնոմիկայի մինիստրի, իսկ 1937—1939 թթ.՝ պրեմիեր-մինիստրի պաշտոնները։ Ջ. Բայարը երբեք պետական կապիտալիզմի խիստ կողմնակիցներից չէր, սակայն 1930-ական թվականներին, գիտակցելով պետական սեկտորի զարգացման անհրաժեշտությունը, չէր ձգտում սահմանափակել ո՛չ պետական կապիտալիզմի և ոչ էլ մասնավոր սեկտորի զարգա-

[16] Karpat Kemal, նշվ. աշխ., էջ 253—254,
[17] „Ulus", 3. XII. 1948.

ցումը։ Սակայն 1940-ական թվականների կեսերին նույն Ջ. Բայարը հայտարարում է իր անհամաձայնությունը՝ թուրքական իշխանությունների կիրառած պետական կապիտալիզմի քաղաքականության հանդեպ։ 1945 թ. նա դուրս է գալիս կառավարող՝ ժողովրդա-հանրապետական կուսակցության շարքերից և ձեռնամուխ է լինում նոր, ընդդիմադիր՝ դեմոկրատական կուսակցության ստեղծմանը։ Հիշյալ կուսակցությունը ստեղծվեց 1946 թ. հունվարի 7-ին, որի կորիզը կազմեցին խոշոր կալվածատերերը, բանկիրները, առևտրականներն ու արդյունաբերողները։ «Դեմոկրատական՝ կուսակցության ղեկավարությունը,— գրում է Ֆ. Սերթելը,— ամենից առաջ գտնվում է այնպիսի խոշոր կալվածատերերի ձեռքին, ինչպիսիք էին Ադնան Մենդերեսը, Ջավիդ Օրալը։ Դեմոկրատական կուսակցության գլխավոր թևը կազմում էին այն խոշոր կալվածատերերը, որոնք ապրում էին քաղաքում և հողագործությունից ստացված կապիտալները ներդնում էին առևտրի ու արդյունաբերության մեջ։ Խոշոր բանկիրները, առևտրականներն ու արդյունաբերողները նույնպես գտնվում էին դեմոկրատական կուսակցության հիմնական կազմի մեջ»[18]։

Երբ 1946 թ. դեմոկրատական կուսակցությունը սկսեց գործել, նրա առաջնորդ Ջ. Բայարը, արտահայտելով թուրքական խոշոր բուրժուազիայի շահերը, հայտարարում էր, որ «պետությունը պետք է օգնի մասնավոր անձանց՝ կապիտալ ներդրումներ կատարելու խոշոր տնտեսական ձեռնարկությունների մեջ»[19]։ Ջ. Բայարը գտնում էր, որ պետությունը պետք է պայմաններ ստեղծի մասնավոր և պետական սեկտորների զարգացման համար։ «Պետական կապիտալը,— նշում էր նա,— պետք է գործի տրանսպորտի, փոստի, ռազմական արդյունաբերության և հատկապես այն բնագավառներում, որտեղ մասնավոր ձեռնարկատիրության համար շահույթ չի ապահովվում։ Որոշ պետական ձեռնարկություններ էլ պետք է հանձնվեն մասնավոր սեկտորին»[20]։ Ընդ որում, Ջ. Բայարն ընդգծում էր, որ նա «հանդես է գալիս ոչ թե ամբողջ պետական կապիտալիզմի, այլ՝ նրա ծայրահեղությունների դեմ»[21]։ «Լիբերալ պետական կապիտալիզմի» ոգով տոգորված այս արտահայտությունները, որոնք ասպարեզ էին իջել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, պետք է մեկնաբանել ոչ միայն նրանով, որ երկրի ազգային բուրժուազիան հարստացել էր պատերազմի տարիներին և ցանկանում էր ազատվել պետական հսկողությունից, այլև նրանով, որ երկրի ժողովրդական մասսաների և, հատկապես, մտավորականության մեջ, է՛լ ավելի մեծ տարածում էին գտնում «ազատության ու դեմոկրատիայի» պահանջները։ Գործարար շրջաններն ազատության վերաբերյալ այդ կոչերը ծառայեցնում էին իրենց շահերին, մեկնաբանելով այն որպես մասնավոր անձանց ազատություն՝ տնտեսական բնագավառում։ Մասնավոր ձեռնարկատիրության գաղափարախոսներից Ա. Բաշարը, որը նախկինում պետական ծառայող էր, պնդում էր, որ

---

[18] Sertel Yıldız, Türkiyede ilerici akımlar ve okalkınma davamız, Istanbul, 1969, s. 65—66.

[19] „Cümhuriyet", 30. VI. 1946.

[20] „Tasvir", 29. IV. 1946.

[21] „Vatan", 7.IV. 1947.

«ազատությունը չպետք է հասկանալ միայն քաղաքական իմաստով. հասարակության մեջ պետք է ապահովվի անձի տնտեսական ազատությունը»[22]։

Երկրի կառավարող ժողովրդահանրապետական և ընդդիմադիր դեմոկրատական կուսակցությունների միջև մղվող միջկուսակցական պայքարը հիշյալ տարիներին հիմնականում բնութագրվում է որպես պայքար պետական կապիտալիզմի կողմնակիցների, որոնց շահերն արտահայտում էր ժողովրդահանրապետական կուսակցությունը, և պետական կապիտալիզմի հակառակորդների միջև, որոնց շահերի արտահայտիչը դեմոկրատական կուսակցությունն էր։

Իր ստեղծման առաջին իսկ օրից անհաշտ պայքար մղելով ժողովրդահանրապետական կուսակցության դեմ, դեմոկրատական կուսակցությունը 1950 թ. մայիսի 14-ի մեջլիսի ընտրություններում հաղթանակ տարավ և երկրի կառավարման ղեկը վերցրեց իր ձեռքը։ Ժողովրդահանրապետական կուսակցության պտրտությունը և դեմոկրատական կուսակցության հաղթանակն առանձին հեղինակներ տարբեր կերպ են մեկնաբանում։ Նրանց հայացքները միայն համընկնում են այն կետում, որ ժողովրդահանրապետական կուսակցությունն իր կառավարման 27 տարիների ընթացքում չկարողացավ լուծել իր առջև ծառացած կարևոր սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդիրները և երկիրը կանգնեցրեց փակուղու առջև՝ առաջ բերելով ժողովրդի դժգոհությունը։ Ուստի պատահական չէր, որ դեմոկրատական կուսակցությունը, չնայած իր գոյատևման կարճ ժամանակահատվածին, կարողացավ հաղթանակ տանել կառավարող կուսակցության նկատմամբ։

Դեմոկրատական կուսակցության հաղթանակի դրդում, անկասկած, իր դերը խաղաց ԱՄՆ-ը, որին ավելի սրտամոտ էր դեմոկրատական կուսակցության ծրագիրը, որտեղ խոստացվում էր սահմանափակել պետության միջամտությունները երկրի տնտեսական գործերում և լայն հնարավորություններ ընձեռել տեղական ու օտարերկրյա մասնավոր կապիտալի զարգացմանը։

Այսպիսով, թուրքական խոշոր բուրժուազիան 1940-ական թվականներին զգալիորեն ամրապնդելով իր տնտեսական դիրքերը, 1950 թ. սկզբներին ձեռք բերեց նաև քաղաքական իշխանություն, որը պատահական չէր, այլ՝ երկրի զարգացման ներքին (մասամբ էլ արտաքին) տնտեսական-հասարակական ու քաղաքական գործոնների օրինաչափ հետևանք։

УКРЕПЛЕНИЕ РОЛИ КРУПНОЙ БУРЖУАЗИИ В ТУРЦИИ (1940-е годы)

САМВЕЛ ГЕГАМЯН

Резюме

Вторая мировая война создала весьма благоприятные условия для обогащения турецкой крупной буржуазии. Первые послевоенные годы

[22] A. H. Başar, Demokrasi buhranları, Istanbul, 1956, s. 11.

характеризовались оживлением дискуссий в различных политических и экономических кругах правящего класса страны о направлениях экономической политики властей, о судьбах и путях развития государственного сектора. В спорах и высказываниях относительно государственного капитализма все отчетливее вырисовывалось усиление позиции крупной турецкой буржуазии, особенно торговой, ее стремление приступить к очередному пересмотру государственного капитализма применительно к новой ситуации, сложившейся в эти годы в самой Турции.